

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՈԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԴԱՎԹԱՆԻ ԵՎ ՄԻ ԺԱՆԻ ԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Վ. Մ. ԲԱՂԴԱՍԻՐՅԱՆ

Անժիտելի է, որ Սայաթ-Նովայի խաղերում ծածկագրեր կան: Ոչ միայն սայաթնովագետները, այլև նրա խաղերն ընթերցողները, անկախ իրենց մասնագիտությունից, այդ նկատում են: Բայց միայն նկատելի բավական չէ, դրանք վերծանել է հարկավոր:

Բայց արդյո՞ք միայն ծածկագրերը, իրադրության շատ բառեր ու դարձվածքներ այսօր տեղ չեն հասնում: Եվ դրա պատճառը առաջին հերթին այն է, որ մեր օրերի բանասերներն ու XVIII դարի բանաստեղծ Սայաթ-Նովան իրարից շատ են հեռու՝ թե՛ ժամանակի առումով, թե՛ դիտելիքներով և, որ կարևոր է, թե՛ մտածելակերպով:

Ավելի նպաստավոր վիճակում էր գտնվում Գ. Ախվերդյանը: Ընգամենի հիսուն տարի էր նրան բաժանում Սայաթ-Նովայից և նրա ծառայությունը միայն երգչի խաղերը հայտնաբերելու և հրատարակելու մեջ չէ: Ունենալով որաթափանց միտք, կռահելու մեծ ունակություն, նա իր «Սայաթ-Նովա» գրքի առաջադրանքում և նամակներում անգնահատելի ճանաչողական դիտողություններ ու եզրահանգումներ է թողել, որոնք սայաթնովագիտության հիմքն են կազմում: Այն բարեխղճությունը, պատասխանատվության բարձր զգացումը, որ նա հանդես է բերել իր մտքերը թղթին հանձնելիս, այսօր էլ կարող են օրինակ ծառայել Սայաթ-Նովայի անձի և ստեղծագործության հետ կապված հարցերը քննելիս: Ահա թե ինչ է գրել նա 1851 թ. հոկտեմբերի 12-ին Մ. Հմինին հասցեագրած իր նամակում. «Զսխալվելու համար պետք է զգույշ լինել: Դու գիտես իմ թույլությունը, ես պետք է մի բան պարզ հասկանամ ու հաստատ իմանամ, որպեսզի այն կարողանամ գրավոր արտահայտել»¹:

Միայն այդպիսի պատասխանատվություն հանդես բերելու դեպքում կարելի է պարզություն մտցնել երգչին վերաբերող մինչ այժմ հասկացված որոշ հարցերում:

Այս հոգվածում շոշափելու ենք խնդիրներ, որոնք թեև քննարկման առարկա են դարձել, սակայն մինչև այժմ էլ դրանց սպառիչ պատասխաններ չեն տրվել:

Նախ խոսենք խաղերի ձևագիր ժողովածուի՝ դավթարի մասին:

Հայտնի է, որ 1848 թ. մայիսին այն հանձնվել է Գ. Ախվերդյանին, որի հոտ մնացել է շուրջ երկու տարի: Այդ ընթացքում նա վերծանել է հայերեն խաղերը և 1852 թ. դրանք լույս ընծայել Մոսկվայում: Գրքի առաջադրանքում Ախվերդյանը մանրամասն տալիս է դավթարի նկարագրությունը, ուր նշում է նաև, որ նրա «...առաջից ու վերջից պակասում են շատ թերթեր»²: Հասկա-

¹ Գ. Ախվերդյան, Նամակներ, Երևան, 1964, էջ 250:

² Նույն տեղում, էջ 23:

նալի է, եթե ընդունենք, որ այդ ժողովածուն ամբողջացել է 1765 թ. մայիսի 1-ին (այլ օրն է կատարել այնտեղ վերջին գրառումը Պենտելենց Հովհանն), ապա 83 տարիների ընթացքում, մանավանդ որ ձեռքից-ձեռք է անցել, այն չէր կարող անվթար մնալ:

Ինչպես հայերեն, այնպես էլ աղբյուրներեն խաղերի մասին Գ. Ախվերդյանի տված տեղեկությունները վկայում են, որ դավթարը հեղինակի կողմից հրակալված չի եղել, այլայես նա կնշեր սկզբից բացակայող էջերի քանակը: Դա այնպիսի փաստ է, որ չէր կարող վրիպել նրա պես մի խորաթափանց մարդու ուշադրությունից: Եթե նույնիսկ ընդունենք էլ, որ համարակալված է եղել, բայց Գ. Ախվերդյանը չի նկատել, ապա դարձյալ չէին կարող պահպանվել նրա սկզբի էջերի թվահամարները, որովհետև, ինչպես վերևում ասվեց, այլ էջերը չկային: Բայց, ո՞վ զարմանք, այսօրվա վիճակով գտնում են, որ դավթարում «Սայաթ-Նովայի կողմից հրակալված են ա—հը (1—78), կրկնված են լա (31) (=31—32) և լբ (32) (=33—34), բաց է թողնված ծը (58) էջանիշը (=59)»³: Եվ այդ կարծիքը այժմ գիտական շրջանառության մեջ է դրված: Հավատա՞նք, արդյոք, որ դավթարը անկորուստ հասել է մեզ, թե՞ դա ուղղակի անտեղյակությունից ծնունդ առած մի ենթադրություն է, որ մատուցվում է ճշմարտության տեղ: Գոնե այն ճշմարտանման լինելու, չհակասեր հավաստի տեղեկությանը, որ դավթարի «...առաջից և վերջից պակասում են շատ թերթեր»: Մենք, իհարկե, չենք անտեսում դավթարի 1—79 էջերը համարակալված լինելու հանգամանքը: Սիայն հաստատ համոզմունք ենք աշխտում, որ սխալ է դա Սայաթ-Նովային վերագրելը: Ամենահավանականն այն է, որ այդ համարակալումը մեկ ուրիշն է կատարել՝ սկզբի էջերն անհետանալուց հետո:

Սայաթ-Նովայի դավթարի հետ կապված «զաղտնիքները» հասկանալու համար, մի կողմ թողնելով մինչ այժմ արված գիտողություններն ու դատողությունները, եկեք սթափ զննենք այն՝ անտեսելով նաև կողմնակի ներմուծումները (համարակալումները): Այնտեղ հեղինակին վերագրվող ա—հը (1—79) էջերի հայատառ համարակալումից բացի կտեսնենք հիշատակագրություններ (հիմնականում վրացերեն) և բազմաթիվ հավելագրություններ: Իրանցից անհասկանալին հավելագրություններն են, ուստի ուշադրության արժանացնենք դրանք: Պետք է, որ այդ գրառումները իմաստ ունենան, ավելորդություններ չլինեն չեն կարող: Եթե դավթարում տեղ են գտել, նշանակում է որևէ նպատակի ծառայում են, միայն հասկանալի պետք: Այնտեղ, օրինակ, մինչև այժմ անհասկանալի մնացած մի էջակալում կա, որ հավելագրությունների շարքն է դասվել: Իզ (23) էջից սկսվում է արաբական տառերի հերթականությունամբ հայատառ այդ համարակալումը: Ըստ որում, որոշ տառերով թվագրված են մի քանի խաղեր: Այդ տեսանելի դարձնելու համար դավթարում գրի առնված հերթականությամբ նշենք տառերը և դրանց գտնվող էջերը:

Ալիֆ—6 էջ (23, 24, 25, 26, 27, 28), Բէի—3 էջ (29, 30, 31), Բէի—3 էջ (32, 33, 34), Վէ—1 էջ (35), Զէ (չիմ)—1 էջ (36), Բէ—1 էջ (37), Խէ—1 էջ (38), Թալ—1 էջ (40), Ուէ—1 էջ (41), Գէ—1 էջ (42), Սիւն—1 էջ (43), Բէ—2 էջ

³ Սայաթ-Նովա, Խաղեր, նմանահանություն, Երևան, 1963, էջ 9:

(44, 45), 46, 47, 48 էջերը չեն համարակալված (դրանք վրացա-տառ գրված աղբբեջաներեն խաղեր են, հավանաբար հետո են ավելաց-վել), զէ—1 էջ (49), շին—5 էջ (50, 51, 52, 53, 54), տէ—2 էջ (55, 56), զէ—1 էջ (57), ային—1 էջ (58), 59, 60 էջերը չեն համարակալված, դա-յին—2 էջ (61, 62), 63 էջը չի համարակալված (վրացատառ է), ֆէ—1 էջ (64), 65, 66 էջերը չեն համարակալված, դաֆ—1 էջ (67), 68 էջը չի համա-րակալված, ֆաֆ—1 էջ (69), լամ—1 էջ (70), 71 էջը չի համարակալված. լամ—1 էջ (72): Այստեղ վերջանում է էջակալումը: Հենց այդ նույն էջի վրա էլ գրված է հայերեն վերջին ծանոթագրությունը, որը տեղեկացնում է, որ խաղը «Արութինի ասած է»: Այնուհետև այլևս չի հանդիպում դավթարի սկզբից հայատառ աղբբեջաներեն խաղերին ուղեկցող այդ ծանոթագրու-թյունը: Նույն այդ էջից սկսվում է մեկ այլ համարակալում, որին կանդրադառ-նանք հետո:

Քննարկենք արաբական տառերի հերթականությամբ հայատառ այդ էջակալումը: Ակնհայտ է, որ Սայաթ-նովայի իմացած արաբական այբբենը գրական չէ, նա տառերը գրում է յուրովի, լսած-սովորածի ձևով: Այդ ցույց տալու համար համադրենք արաբական այբբենի և էջակալման նրա տառերը: Ալիֆ—ալիֆ, բա—բէի, տա—թէի, սա—սէ, ջիմ—ջէ (ջիմ), հա—հէ, խա—խէ, դալ—տալ, զալ—զալ, բա—ռէ, զայն—զէ, սին—սին, (րէ, զէ միջանկյալ են, իրենց տեղերում չեն), շին—շին (բաց են թողնված սադ—դադ), քա—տէ, զա—զէ, ալն—ալին, դայն—դալին, ֆա—ֆէ, կաֆ—դաֆ, ֆաֆ—ֆաֆ, լամ—լամ:

Մենք տեսնում ենք, նաև, որ էջակալումը տառերի այբբենական հերթա-կանությամբ է, մինչդեռ ճիշտ կլիներ այդ անել, ինչպես սովորաբար ընդուն-ված է, դրանց թվարժեքներով, քանի որ արաբական այբբենի տառերի քա-նակը հնարավորություն է տալիս այդ եղանակով համարակալել միայն 28 էջնոց մի տետր:

Մեկ այլ բան է հուշում որոշ տառերով մի քանի խաղ համարակալված լինելու հանգամանքը: Մեզ թվում է, որ դավթարի սույն էջակալված մասի խաղերը ժողովված են առանձին տետրակներից: Օրինակ, ալիֆ տառի տակ հղած վեց խաղերը վկայում են, որ այդ ընտրանին կատարված է առնվազն վեց տետրակից: Հաստատապես կարելի է ասել նաև, որ այդ տետրերում նույնպես աղբբեջաներեն խաղերը գրի առնված են եղել հայատառ և նույնու-թյամբ փոխադրվել են դավթարի մեջ:

Ինչպես հայտնի է, դավթարն սկսվում է աղբբեջաներեն խաղերով, որոնք գրված են հայոց բոլորգրով: Շատ էջերում նույն բոլորգրով գրված են միայն խաղերի առաջին տները: Այդ խաղերի անավարտ թողնված շարու-նակությունը գրի է առնված մասամբ հայերեն անվարժ ձեռագրով, մասամբ էլ վրացերեն վարժ նոտրգրով: Նկատելի է, որ այդ լրացումների մի զգալի մասը Սայաթ-նովայի ձեռագիրը չէ:

Վերևում մենք նշեցինք, որ դավթարում հեղինակին վերագրվող համա-րակալմամբ 72-րդ էջից, որտեղ վերջանում են արաբական տառերի հերթա-յանությամբ համարակալումը և հայերեն ծանոթագրությունները, սկսվում է մեկ այլ էջակալում: 72 և 73 էջերի խաղերի ներքևից վրացերեն գրված երեք տառերից վերջինները ա են: 74 էջում ա-ի տեղը գրավում է բ-ն, 75-ում՝ գ-ն, 76-ում՝ դ-ն, 77-ում՝ է-ն, 78-ում՝ վ-ն, 79-ում՝ զ-ն, 80-ում՝ ց-ն, 81-ում՝ ք-ն:

Այստեղ էլ վերջանում է համարակալումը: Վրացական այբբենի կանոնավոր հերթականությամբ այդ տառափոխությունը, որը թվերի լեզվով կնշանակի 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, վկայում է, որ այստեղ մենք գործ ունենք նախագիր մի տետրից միասնաբար դավթարի մեջ մտցրած խաղերի հետ:

Այսպիսով, դավթարի հավելագրությունների մեջ ի հայտ բերեցինք երկու էջակալումներ, որոնք մեզ որոշ պատկերացում են տալիս ինչպես այդ ժողովածուի, այնպես էլ նրա հեղինակի գիտելիքների ու մտածելակերպի մասին:

Այժմ կարելի է ուշադրության արժանացնել նաև այսպիսի մի հարց. Սայաթ-Նովան ինչպե՞ս էր տիրապետում այն լեզուներին, որոնցով ստեղծագործել է: Գուցե արտաքուստ անմիտ թվա այս հարցը, քանի որ երգիչը երեք լեզուներով էլ գրեթե հավասարազոր երգեր է հորինել: Դժա վառ ապացույցը ամենքին հայտնի նրա հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերն են: Բայց եկեք այդ անմիտ թվացող հարցը քննարկենք գիր իմանալու տեսակետից և այն կիմաստավորվի: Եթե երեք լեզուներին բանավոր տիրապետելու ապացույցները կասկած չեն հարուցում, ապա նրա թողած ձեռագիր նմուշները վկայում են արաբերեն գիր չիմանալու մասին: Հակառակն ասացուցող ոչինչ չկա: Երգիչն իր ադրբեջաներեն խաղերը մեզ հասած դավթարում գրի է առել հայկական, մասամբ էլ վրացական տառերով: Իսկ արաբական տառերի հերթականությամբ վերը բերված էջակալումը, ինչպես նաև հայատառ գրած նրա ադրբեջաներեն ալիֆլամաները ցույց են տալիս, թե նա ինչ չափով էր տիրապետում այդ լեզվի այբբենին: Ոչ մի կասկած չի մնում, որ Սայաթ-Նովայի իմացածը լսած-սովորածն է եղել՝ նա արաբերեն կրթություն չի ստացել:

Իր թողած ժառանգությամբ՝ երեք լեզուներով գրած խաղերով Սայաթ-Նովան այսօր էլ չի դադարել «խալխին համով ղուլուղ» անելուց: Եվ, բնական է, նրա ստեղծագործությանն ու անձնավորությանը վերաբերող մինչ այժմ անպատասխան մնացած հարցերի թվում մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև այն, թե Սայաթ-Նովան ե՞րբ է սկսել հայերեն ստեղծագործելը: Այդ հարցը կարևոր է նրանով, որ առնչվում է երգչի կենսագրությանը վերաբերող մի խումբ այնպիսի հարցերի, որոնց պատասխանները, մեր կարծիքով, առայժմ անստույգ ու անորոշ են: Ահա թե ինչ է գրել Գ. Ախվերդյանը առաջադրված հարցի մասին 1852 թ. հրատարակած իր «Սայաթ-Նովա» ժողովածուի առաջաբանում. «Բանից երևում է, որ Սայաթ-Նովեն աշուղություն կցել է թուրքերեն (նկատի ունի ադրբեջաներենը—Վ. Բ.) ասած խաղերով, որոնցով սկսվում է նրա դավթարը: Հն գլխեն մտածելով խաղն ասելու տարին նշանակելու համար, առաջ սրանց համար է հոգացել. իր դավթարումն էլ ամենից հին խաղը թուրքերենն է, որն որ հանած ունի 1742-ին. հետն էլ տեսնում ենք, որ էս խաղերուց հետո՝ սկսելով հայերեն խաղն, սրա տակն նշանակելով ասելու տարին, գրում է՝ հիմի կուզիմ թե հայեվար ասիմ: էս խոսքերն լավ ցույց են տալիս, որ Սայաթ-Նովեն՝ թուրքերեն, կարելի է ևս վրացերեն՝ ասած խաղերով անուն ճարելուց հետո, ուղում է ևս հայերեն ասել ու տարին նշանակած ունեցող հայերեն հանած խաղերուց ամենից հինն ասած է թուրքերենից տաս տարով հետո—1752-ին»⁴ (խոսքը «Շատ սիրուն իս, շախմատի ասողին խար շիս անի» սկզբնատողով խաղի մասին է):

4 Գ. Ախվերդյան, Նամակներ, էջ 16:

Առաջին հայացքից թվում է այստեղ վիճարկելու ոչինչ չկա: Բայց Ախվերդյանը, մեծ զգուշությամբ վերաբերվելով իր բերած փաստերի տրամաբանական եզրակացությանը, անկարելի է համարում, որ Սայաթ-Նովան «...էս տաս տարվան մեջ չլի ասել հայերեն գոնե մեկ հատ խաղ: Կարելի է,— շարունակում է նա,— որ տարին նշանակած շունեցող խաղերն հենց էս միջոցումն ըլին ասած»⁵: Առաջաբանում հեղինակն այդ միտքը արտաստում է նաև նույն խաղի տակ հիշատակված «յարսուն տարվա» առիթով: Նա նշում է, որ Սայաթ-Նովան «...ի՛նչ խաղի տակն ունի գրած թե՛ ինչօրի յարսուն տարին գլուխ դրի ամենան խաղին. թեպետ անկարելի է, որ իր երեսնամյա հասակին շունենա բան ասած, բայց համարձակ կարող ենք ասել, որ էս հասակից առաջ չի ըլիլ գլուխ դրել նշանակելուն իր խաղերու օրն, ամիսն ու տարին»⁶:

Ինչպես տեսնում ենք, Դ. Ախվերդյանը իրավացիորեն կասկածի տակ է առել առերես հավանական թվացող այն փաստի արժանահավատությունը, թե իբր Սայաթ-Նովան երեսուն տարին լրանալուց հետո է սկսել հայերեն խաղեր հորինել: Իսկապես, ինչպե՞ս կարելի է հավատալ, որ մի այնպիսի կատարյալ խաղ, որի տակ հեղինակը գրել է «էս դիվանի խիստ լավն է», նրա առաջին հայերեն ստեղծագործությունը լինի: Անհավանական է նաև երեսուն տարին բոլորելուց հետո Սայաթ-Նովայի հայերեն ստեղծագործել սկսելու հանգամանքը:

Բայց տարօրինակն այն է, որ ինչ անհավանական է համարել Դ. Ախվերդյանը, ժամանակի քննաքննում անհիմն կերպով դարձել է հավանական: Այսօր գրեթե բոլորն էլ ընդունում են, որ Սայաթ-Նովայի դավթարի առաջին հայերեն խաղը հենց այն անդրանիկ ստեղծագործությունն է, որ նա լույս աշխարհ է հանել երեսնամյա հասակում:

Ամբողջությամբ մեջ բերենք քննարկվող ծանոթագրությունը, տեսնենք. թե այն ինչ հիմք է տալիս նման ըմբռնման համար. «էս դիվանի խիստ լավն է, ովոր սովրի օղորմի ասե: Հիմի կուղիմ թե հայեվար ասիմ: Ամեն աստուծ. իս մըղըըսու վուրթի Արութինս, պստուց ինչոր յարսուն տարին գլուխ դրի ամենան խաղին, ամա սուրբ Կարապիտի կարողութենով սովրեցա քամանչեն ու շոնգուրն ու ամբուրեն»:

Շատ պարզ նկատելի է, որ ծանոթագրության մեջ միայն «էս դիվանի խիստ լավն է, ովոր սովրի օղորմի ասե» նախադասությունն է առնչվում խաղին, իսկ դրան հաջորդող մյուս տեղեկությունները նրա հետ ոչ մի կապ չունեն: Սայաթ-Նովան այդ տեղեկությունները կարող էր գրել մեկ այլ բանաստեղծության տակ և դրանով ոչինչ չէր փոխվի. Իսկ թե ինչու նա անհրաժեշտ է համարել դրանք զետեղել «Շատ սիրուն իս, շախաթայի ասողին խար չիս անի» տողով սկսվող դադելի տակ, դա էլ հասկանալի է. քանի որ դավթարում հայերեն խաղերը սկսվում են հենց դրանով: Ինչպես հայտնի է, այդ խաղերը դասավորված են ոչ ժամանակագրական կարգով, այլ դիվան կազմելու սկզբունքով, մի հանգամանք, որը նույնպես վերը նշված խաղը առաջին հայերեն ստեղծագործությունը լինելու օգտին չի խոսում:

⁵ Նույն տեղում, էջ 16:

⁶ Նույն տեղում, էջ 14:

Սայաթ-Նովան «Հիմի կուզիմ թե հայեվար ասիմ» դարձվածով ցանկացել է ասել այն, ինչ ասել է. որ «...մըղղըսու վուրթի Արուժինս, պստուց ինչոր յարսուն տարին գլուխ դրի ամենան խաղին, ամա սուրբ Կարապետի կարողութենով սովրեցա քամանչեն ու շոնգուրն ու ամբուրեն»։ Ոչ մի հիմք չկա ենթադրելու, թե խոսքը հայերեն խաղ հորինելու մասին է։ Մեր կարծիքով, այստեղ խոսքը հայերեն ծանոթագրելուն է վերաբերում։ Բանն այն է, որ հեղինակը սովորաբար հայերեն խաղերը վրացերեն է ծանոթագրել, վերը նշված խաղը բացառություն է կազմում, միակն է, որի տակ Սայաթ-Նովան իր ասելիքը հայերեն է ասում, թեև դարձյալ վրացատառ է ծանոթագրում։

Ինչպես տեսնում ենք, դժվար է հավատալ, որ Սայաթ-Նովան երեսուն տարեկանում է խորապես զգացել «...մայրենի լեզվի կարիքը, այն լեզվի, որով թոթովել է մանկուց, որով մտածել ու մտածում էր», ինչպես այդ նշում է բանաստեղծի կենսագրական ակնարկում Մ. Հասարայանը։ Անհավանական համարելով, որ երգիչը 1752 թ. նոր միայն հայերեն երգեր գրել սկսած լինի, Խ. Ախվերդյանը նրա ծննդյան թիվը որոշելիս նույնիսկ այդ փաստը չի օգտագործել։ Չէ՞ որ 1752-ից «յարսուն տարի» հանելու դեպքում կստացվեր 1722 թ. ոչ թե 1712 թ.։

Ոչ որ չի կարող որոշակիորեն ասել, թե Սայաթ-Նովան երբ է սկսել հայերեն ստեղծագործելը, ինչպես հնարավոր չէ նաև ստույգ որոշել ադրբեջաներեն և վրացերեն խաղեր հորինելու սկիզբը։ Սուկայն ստույգ կարելի է ասել, որ նա հայերեն երգեր է գրել շատ ավելի վաղ, քան կարծում են այժմ։ Այդ ապացուցելու համար ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում նրա դավթարի հայերեն երկրորդ խաղի վրա, որն սկսվում է «Դարդ մի անի ջան ու ճիգար, միթկըտ դիվաց չը տեսնե» տողով։ Ինչպես առաջին խաղը, սա էլ հեղինակը առել է քառանկյուն շրջանակի մեջ և դրանից դուրս նշանակել տառեր, որոնք թվանշանների նշանակություն ունեն։ Այդ տառերը կարդալու, դրանց իմաստը հասկանալու փորձեր արվել են, բայց արդյունք չի ստացվել։ Բանն այն է, որ դրանցից մեկը՝ ներքևից գրված տառը, անընթեռնելի է, իսկ շրջանակի վերևի տառը թյուրիմացաբար վրացական լավ է համարվել։ Այդ տառը իրականում հայերեն ա-ն է։ Որ դա իրոք այդպես է՝ դժվար չէ նկատել։ Նախ՝ տառը գրված է գծին զուգահեռ, մինչդեռ վրացերեն լավ լինելու դեպքում այն պետք է ունենա ուղղահայաց դիրք։ Ներկրորդ՝ չէ՞ որ վրացերեն ալ-ն, շնայած հեռավոր նմանություն ունի հայերեն ա-ի հետ, բայց նրանից խիստ տարբերվում է։ Ամբողջ դավթարում այդ տառին նմանվող լավ չկա։ Պարզորոշ գրված է հայերեն ա։

Այսպիսով, բանաստեղծությունը շրջափակող քառանկյան ձախ և աջ կողմերում գրված վրացական դ և վ տառերից բացի, վերևում պարզորոշ գրված է հայկական ա-ն։ Արդեն հայտնի այդ տառերին թվական արժեքներ տալու դեպքում կստանանք 1, 4, 6 թվերը։ Այդ իմանալուց հետո դժվար չէ որոշել, թե որն է անընթեռնելի տառը։ Այսպես, տեղագրելով մեզ հայտնի և անընթեռնելի տառերը այնպիսի հաջորդականությամբ, ինչպիսի Գ. Ախվերդյանը և նրա օրինակով մյուս սայաթնովագետները դասավորել են դավթարի հայերեն առաջին խաղը շրջափակող քառանկյունից դուրս գրված տառերը, կստանանք՝ ա, ի, դ, վ, իսկ դրանց թվարժեքներ տալու դեպքում՝ 1, 4, 6։ Այստեղից պարզ է դառնում, որ անհայտը հարյուրամյակը (դարը) ցույց տվող տառն է։ Այն պետք է ունենա 7 թվարժեք, քանի որ հաստատապես դիտենք՝

Սայաթ-Նովան ապրել և գործել է XVIII դարում: Եվ այդ տառը պետք է լինի հայկական՝ 7 թվարժեքով Լ-ն: Մ. Հասրաթյանի ենթադրությամբ այդ տառը վրացական ն կամ ի, գուցե և հայկական օ կարելի է կարդալ: Իրոք որ հայկական է տառի ներքևի մասնիկը հիշեցնում է վրացական ի, հայկական օ, իսկ ամբողջապես տառը, որոշ տարբերությամբ, նման է վրացական ն-ին:

Այս իմանալուց հետո պարզ է դառնում, որ Սայաթ-Նովան ինչպես խաղն է գրել հայ և վրաց խառը տառերով, այնպես էլ այն շրջափակող քառանկյունուց դուրս գտնվող ա է դ վ տառերը: Հայկական ա և վ վրացական դ վ տառերին թվական նշանակություն տալով կստացվի 1746: Դա այն թվականն է, երբ 24-ամյա Սայաթ-Նովան հորինել է իր հանրահայտ գազել-դիվանին:

Մեկ անգամ ևս կրկնենք, որ գիտական շրջանառության մեջ գտնվող այն կարծիքը, թե իբր Սայաթ-Նովան հայերեն ստեղծագործել սկսել է 1752 թ.՝ երեսնամյա հասակում, զուրկ է որևէ հիմքից: Ինչպես տեսանք, ամենավաղ թվագրված աղբյուրական խաղից ընդամենը չորս տարի հետո՝ 1746 թ. երգիչը հորինել է վերը հիշված գազել-դիվանին: Սակայն դա բոլորովին էլ չի նշանակում, թե նրա հայերեն ստեղծագործելու սկիզբը պետք է համարել 1746 թ.: Սայաթ-Նովան, իր խոսքերով ասած, «պստուց է գլուխ դրել ամենան խաղին», այդ թվում նաև՝ հայերեն խաղին: Որ դա այդպես է, մենք կասացուցենք նաև նրա ծածկագրերը վերլուծելիս:

Այժմ պարզենք այսպիսի մի հարց. ի՞նչ է ծածկագիրը, ի՞նչ պետք է հասկանալ ծածկագիր-գաղտնագիր ասելով: Հարցը այնքան պարզ է, որ թվում է բոլորն էլ կարող են ստույգ պատասխանել: Բայց տեսեք, թե ինչպես են հասկանում Սայաթ-Նովայի ծածկագրերը դրանք վերծանողները: Բերենք միայն մի օրինակ: «Դիտողություններ Սայաթ-Նովայի դավթարի մասին» հոդվածում Հ. Բախչինյանը, կրկնելով այլոց սխալները, դրանք ներկայացնում է որպես սեփական դատողություններ և երգչի դավթարի 101 էջի աղբյուրներն զարահեջայի առիթով արտահայտում այսպիսի մի միտք. «Ամենից առաջ պետք է ասել, որ ծածկագիր է ոչ թե ամբողջ տողը, այլ միայն «ի ու ալիֆ երկու բե» հատվածը: Այդպես է նաև երգչի մյուս ծածկագրավոր դարահեջաներում: Այսպես, դավթարի 87-րդ էջում գտնվող վերոհիշյալ աղբյուրներն խաղի ծածկագիրն է «Թե ու ալիֆ երկու ֆաֆ»-ը, հայերեն N 50 դարահեջայի ծածկագիրն է՝ «Կեն ու ալիբ քո» հատվածը և այլն: Աղբյուրներն N 77 խաղի (նկատի ունի դավթարի 101-րդ խաղը—Վ. Բ.) երկրորդ ծածկագիրն էլ, ուրեմն, ոչ թե ամբողջ տողն է, այլ միայն «Յե ու ալիֆ երկու բե» հատվածը»:

Ի՞նչ է նշանակում «ծածկագրավոր դարահեջաներ» արտահայտությունը. ուրեմն դարահեջաները կարող են լինել նաև առանց ծածկագրերի: Հանդիպել է նա ամբողջ դավթարում այդպիսի մի դարահեջայի: Վերը բերված տողերի հեղինակը գիտե՞ արդյոք, թե ինչպիսի կառուցվածք ունեն նման խաղերը:

Տրամաբանական չէ նաև «Յի ու ալիֆ երկու բե», «Թե ու ալիֆ երկու ֆաֆ», «Կեն ու ալիբ քո» կիսատողերը ծածկագրեր համարելը (այն էլ դարահեջաներում):

Նույնպիսի վրիպումներ են հանդես բերել մի շարք բանասերների Սալաթ-Նովալի «Այբրբիմն կարթացիլ իմ դասեղաս» տողով սկսվող թեջնիսի ծածկագիրը վերծանելիս: Չէր կարելի, օրինակ, այդ խաղի ծածկագիրը ՌԶԾԷ-ն կամ ՌԵՃԿԶ-ն համարել: Չէ՞ որ տարեթիվը տառերով կամ դրանց թվարժեքներով գրելը դեռևս ծածկագիր չէ (տե՛ս թեջնիսի ծածկագրի մեր վերծանումը՝ «Սովետական գրականություն» ամսագրի 1975 թ. 2-րդ համարի «Լսենք Սալաթ-Նովալին» հոդվածում):

Ծածկագրերը (գաղտնագրերը) ոչ մի հանրահայտ օրենքի ուղղակիորեն չեն ենթարկվում: Դրանք հեղինակի մտահղացման արդյունք են և վերծանելու համար հարկավոր է նախ լավ ուսումնասիրել, հասկանալ չուրաքանչյուր խաղի կառուցվածքը, որոշել դրա տեսակը: Ղարահեջան, օրինակ, խաղի այն տեսակն է, որը ունի շատ բարդ կառուցվածք և ծածկագիր: Սալաթ-Նովալի դավթարում հայերեն ղարահեջա չկա: Օհանի ձեռագրով մեզ հն հասել ընդամենը երկու ղարահեջա: Դրանցից մեկը Երզնի ալբերենաշար-ղարահեջան է, որից պակասում է երկու տուն, իսկ մյուսը հետևյալ խաղն է.

Մըտա էշիսի քուբեն խալիս դառնալու,
Սիրտրս էլավ քէ ու ալիք էրկու բեն.
Կամով սովդեն մըտա դարդըն բառնալու,
(էլ) ում բըռնիմ սէ ու ալիք էրկու բեն:

Դադա պիտի խոսկըն դադիմի շինեն.
Շարբաբի միշումըն խամ թիլ չը հինեն.
Ճորո: Նըման շասեն. իմ դեղեն ձին է,
Մարթ վուր ըլի նու ու ալիք էրկու բեն:

Ինչպես վուր կրրակին չի դիմանա մում,
էնպես սախաթ կուլի, ովոր խոսի հում.
Սալաթ-Նովեն ասաց էնդուր չի պակսում
էրկու աշկես էրկու ալիք էրկու բեն:

Քննարկենք այս խաղը: Ի՞նչ խնդիր է դնում Սալաթ-Նովան մրցակցի առջև, ի՞նչ պատասխան պետք է գտնի նա: Այստեղ հարցադրումն այն է, որ ծածկագիրը վերծանվի այնպես, որ մարդ լինի նու ու ալիք երկու բեն («մարթ վուր ըլի նու ու ալիք էրկու բեն»), թվերի լեզվով՝ $22+1+2+2=27$: Այդ թիվը ստանալու համար խաղի հյուսվածքից առանձնացնենք նրա մետաքսե հենքը, որովհետև պահանջվում է «շարբաբի միշումըն խամ թիլ չհինեն»: Իսկ այդ հենքը հետևյալն է.

Քէ ալիք էրկու բեն.
Սէ ալիք էրկու բեն.
Նու ալիք էրկու բեն.
Ալիք ալիք էրկու բեն:

Ծածկագրի վերջին տողի երկու այբը մենք առանձին-առանձին գրեցինք, նկատի ունենալով, որ խաղի մեջ հեղինակը թելադրում է դրանք երկու աչքում (երկու սյունակում) տեղադրել: Այժմ ծածկագրի տառերի դասավորության մեջ նշենք դրանց հերթական տեղերը հայկական այբբենի մեջ:

Քէ—36	ալիբ—1	2	բեն—2,
Սէ—29	ալիբ—1	2	բեն—2,
Նու—22	ալիբ—1	2	բեն—2,
Ալիբ—1	ալիբ—1	2	բեն—2:

Ծածկագրի տառերի այբբենական հերթականությունից ստացված թվերը առանձնացնելով, դրանք գումարենք իրար:

$$\begin{aligned}
 36 + 1 + 2 + 2 &= 41 \\
 29 + 1 + 2 + 2 &= 34 \\
 22 + 1 + 2 + 2 &= 27 \text{ («նու ու ալիբ էրկու բեն»)} \\
 1 + 1 + 2 + 2 &= 6 \\
 \hline
 88 + 4 + 8 + 8 &= 108
 \end{aligned}$$

Ստացված ընդհանուր գումարը (108) բաժանենք ծածկագրի տողերի (4) վրա. $108:4=27$ («նու ու ալիբ էրկու բեն»): Խաչաձև ստուգամբ ստացանք ճիշտ այն հարցի պատասխանը, որ խաղի հեղինակը առաջադրել է մրցակցին: Թե ի՞նչ թիվ է այդ 27-ը, մենք արդեն գիտենք խաղից, որ Սայաթ-Նովայի տարիքն է («Մարթ վուր Ըլի նու ու ալիբ էրկու բեն») ղարահեջան հորինելու ժամանակ (մյուս ղարահեջաների ծածկագրերը կառուցելիս նա նույնպես իր տարիքն է օգտագործել): Այս փաստը ևս վկայում է, որ Սայաթ-Նովան վաղ տարիքից է սկսել հայերեն խաղեր հորինելը:

Քննարկվող ղարահեջայի ծածկագիրը վերծանելու տարբեր փորձեր են եղել: Դրանցից վերջինը Հ. Բախչինյանինն է՝ նա Սայաթ-Նովայի «Այբբ-բիմբն կարթացիլ իմ դասեղաս» սկզբնատողով թեջնիսի վրա մի սխեմա կառուցելով, այն արհեստականորեն տարածել է նաև այս խաղի վրա, մոռանալով, որ թեջնիսն ու ղարահեջան տարբեր կառուցվածքի ստեղծագործություններ են:

Ղարահեջայի ծածկագիրը թեև վերծանել ենք 1973 թ., սակայն չենք հրապարակել, որովհետև անհրաժեշտ էր ստուգել, համոզվել դրա ճշտության մեջ, բայց դժբախտաբար Սայաթ-Նովան հայերեն այլ ղարահեջա շունի, բացի վերը հիշատակված այբբենաշարից, որից երկու տուն պակասում է: Թեև մեծ դժվարությամբ, սկսեցինք ուսումնասիրել նրա աղբյուրներն ղարահեջաները և, ի վերջո, համոզվեցինք, որ վերը ստացված արդյունքը պատահականություն չէ:

Սայաթ-Նովայից մեզ են հասել ընդամենը հինգ ղարահեջա, որոնցից երկուսն են հայերեն: Երբ արդեն որոշ չափով ծանոթացանք երգչի ծածկագրելու եղանակներին, կարող ենք քննարկել նաև նրա հայերեն այբբենաշար-ղարահեջայի գաղտնիքը պարզելու հարցը: Ուստի մեջ բերենք այդ խաղը, որի երկու տունը, ինչպես վերևում ասվեց, պակասում են:

ԱՅԲ Աստված սիրիս, բեն բարի կացի.

ԳԻՄ գագաթըտ արա ԴԱ ու ալիբ քո.

ԵՋ երանի չը կա ԶԱ շալում մարթուն՝

է Ըտ էրեսիտ գի ԹՈ ու ալիբ քո:

Ժե ժամանակ հասավ աշկերքս լալու.
 Ին ինձի գրցեցի դարգրս վուխալալու.
 ԼՅՈՒՆ լալով իմ յիս աշխարհս մնալու
 էնդուր վախ քաշեցի հե ու ալիք րո:

ԾԱ. ծովումըն մընաց դուս չէկավ նավրտ.
 Կնն կամով ավելցրար սորտի ցավրտ.
 ՀՈ համան կանչում իս ՁԱ ձայնով դավրտ.
 ՂԱԲ դարուկ կաց՝ ճարիս ճե ու ալիք րո:

..... (ՏՅՈՒՆ ու ալիք րո):
 ԲԵ-րըն ՅՈ ցամբիլ է. ՀՅՈՒՆ հունար ունի,
 ՓՅՈՒՐ փակեցին դուռըն, ՔԵՆԸ քար ունի.
 ԵՎ Օ ՖԵՆ կարթալու Աստված ճար ունի,
 Հալալ Սալաթ-նովուն՝ կեն ու ալիք րո:

Խաղի նախավերջին անհայտ տան վերջին կիսատողը մենք ենք ավելացրել, բայց ոչ ենթադրաբար: Մենք գիտենք, որ վերջին տունը սկսվում է ԲԵ տառով, իսկ այբբենում նրան նախորդող տառը ՏՅՈՒՆ-ն է: Ուրեմն կասկած չի կարող լինել, որ այդ կիսատողով էլ ավարտվել է նախավերջին տունը: Կարելի է ենթադրաբար լրացնել նաև խաղից պակասող չորրորդ տան հանգակապ կիսատողը, որը ծածկագրի մի տողն է: Մակայն դա դեռևս բավական չէ, որովհետև չգիտենք հեղինակը ինչ դեր է հատկացրել բաց թողնված կիսատողերին՝ ծածկագիրը վերծանելու գործողության մեջ: Ուստի հրաժարվենք դրանցից և մտածենք այլ կերպ: Ձեռագրի հեղինակը՝ երգչի որդի Օհանը, խաղի չորրորդ և հինգերորդ տները բաց թողնելուց հետո ինչո՞ւ է անհրաժեշտ համարել գրի առնել վերջին տունը: Արդյո՞ք պակասող տների հանգակապ կիսատողերը ծածկագրի հենքից բացասված տողեր չեն: Փորձենք առանց դրանց այբբենաշար-դարահեջայի մեզ հասած տներից առանձնացնել ծածկագիր պարունակող տողերը և ուշագիր ծանոթանալ դրանց:

ԳԻՆ՝ դադաթըտ արա ԴԱ ու ալիք րո.
 է Ը-տ երեսիտ դի ԹՈ ու ալիք րո.
 էնդուր վախ քաշեցի հե ու ալիք րո.
 ՂԱԲ դարուկ կաց՝ ճարիս ճե ու ալիք րո.
 Հալալ Սալաթ-նովուն կեն ու ալիք րո:

Ուշագրություն դարձնենք առաջին և երկրորդ տողերին: Ի՞նչ է նշանակում «ԳԻՆ՝ դադաթըտ արա ԴԱ»: Գիտենք, որ Դ-ն այբբենի 3-րդ տառն է, իսկ Դ-ն՝ 4-րդը: Նշանակում է ծածկագրի կիսատողի մեջ պետք է մտցվի բարձրը (զագաթը) ԴԱ-ն: «Գադաթը» մի յուրատեսակ բանալի է նաև մյուս տողերի համար: Ուստի ծածկագրի կիսատողերի մեջ «ալիք թո»-ից առաջ տեղ պետք է գրավեն ԴԱ, ԹՈ, հե, ճե տառերը:

Ավելի հնարամտորեն է կառուցված երկրորդ տողը: Ի՞նչ կարելի է հասկանալ «է Ը-տ երեսիտ դի» կիսատողից: Ի՞նչ գաղտնիք է թաքցրել այստեղ Սալաթ-նովան: Է-ն 7-րդ, իսկ Ը-ն 8-րդ տառերն են այբբենում: Դրանք իրար երեսի դնելու, այսինքն գումարելու դեպքում կստանանք 15: Այդ թիվը պետք է ավելացվի ԹՈ-ին: Մյուս տողերում, ինչպես տեսնում ենք, բարդություններ չկան, հասկանալի են, դրանց ծածկագիր կիսատողերը պետք է նույնությամբ մտցվեն հենքի մեջ:

Առանձնացնենք այդ հենքը, հաշվի առնելով հեղինակի ակնարկումները.

ԴԱ ու ալիբ քո
 15 + ԹՈ ու ալիբ քո
 ԽԵ ու ալիբ քո
 ՃԵ ու ալիբ քո
 ԿԵՆ ու ալիբ քո

Ծածկագրի տառերին թվերի տեսք տանք ըստ այբբենի (և այբբենաշարի) գրաված իրենց հերթական տեղերի, ԹՈ-ին գումարելով նաև 15-ը: Կստանանք հետևյալը.

$$\begin{aligned} 4 + 1 + 9 &= 14 \\ 24 + 1 + 9 &= 34 \\ 13 + 1 + 9 &= 23 \\ 19 + 1 + 9 &= 29 \\ 15 + 1 + 9 &= 25 \text{ («ԿԵՆ ու ալիբ քո»)} \\ \hline 75 + 5 + 45 &= 125 \end{aligned}$$

Գումարման գործողություններ կատարելով, կստանանք ծածկագրի թվերի հանրագումարը՝ 125: Այն բաժանելով տողերի՝ 5-ի վրա, կստանանք 25 («Հալալ Սայաթ-նովուն կեն ու ալիբ քո»): Ուրեմն Սայաթ-նովան այբբենաշարը հորինելու թվականին եղել է 25 տարեկան: Հասկանալի է, որ միայն տարիների փորձ և հմտություն ձեռք բերելուց հետո կարելի է ստեղծել մի այնպիսի բարդ խաղ, ինչպիսին քննարկվող այբբենաշար-ղարահեջան է:

Սայաթ-նովայի մեր քննարկած �ղարահեջանների ծածկագրերի վերծանման բանալիները, ինչպես տեսանք, իրարից խիստ տարբերվում են: Այլ կերպ լինել չէր կարող: Չէ՞ որ մրցույթներում հաջողության հասնելու կարևոր պայմաններից մեկը հենց այդ բանալի-գաղտնիքները գծվար հասկացվելու մեջ էր: Ուստի դրանք նույն եղանակով ծածկագրելու դեպքում մեկի բանալին գտնելուց հետո մյուս �ղարահեջանները նպատակին չէին ծառայի: Մրցակիցը առանց դժվարության կարող էր հասկանալ դրանց գաղտնիքները:

Ղարահեջանների ծածկագրերի վերծանումները ցույց են տալիս նաև, որ Սայաթ-նովան գաղտնագրելու համար առհասարակ օգտագործել է տառերի այբբենական հերթականությունը, բացառությամբ որոշ այլ բնույթի խաղերի, որոնց ծածկագրերում նույնպես տառերի թվարժեքները քիչ դեր են խաղում:

О «ДАВТАРЕ» И НЕКОТОРЫХ ПЕСНЯХ САЯТ-НОВЫ

В. С. БАГДАСАРЯН

(Резюме)

Сведения Г. Ахвердяна о рукописи Саят-Новы «Давтар» свидетельствуют, что в начале и в конце ее недостает много страниц. Следовательно, неправомерно мнение о том, что страницы 1—79 «Давтара» пронумерованы самим Саят-Новой. С 23-й страницы нумерации, приписанной 16*

сываемой автору, начинается нумерация армянскими буквами в последовательности арабского алфавита, которая кончается 72-й страницей. Некоторые песни пронумерованы одинаковыми буквами, что указывает на то, что эти песни извлечены из разных тетрадей; например, шесть песен под буквой *алиф* взяты минимум из шести тетрадей.

Следующие 9 страниц последовательно пронумерованы грузинскими буквами. Таким образом, здесь мы имеем дело с песнями, внесенными в «Давтар» из единой более ранней тетради.

Прочтение букв, написанных за квадратом, окаймляющим вторую армянскую песню «Давтара», и восстановление их числового значения показывает, что Саят-Нова написал эту газель-диван в 1746 г., когда ему было 24 года. Этим опровергается мнение о том, что он начал создавать армянские песни по достижении 30-летнего возраста. Сказанное подтверждает расшифровка криптограмм двух его армянских песен, согласно которой Саят-Нова написал 49-ю армянскую песню в 27-летнем, а 50-ю песню — в 25-летнем возрасте (нумерация по изданию М. Асратяна).

Расшифрованы также четыре из дошедших до нас пяти «караэджя» Саят-Новы (две на армянском и две на азербайджанском языке). Выясняется, что Саят-Нова вообще использовал для шифровки алфавитную очередность букв.